Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19524

102

Բանաստեղծություններ
Գրիգոր Զարյան

891.99
Զ-48

Թ. 1904

5532
С/926/174
(107)
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ՖԸԴՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՈԴԷԼՆԵՐ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Թոմբեանցի
1904

55

5532
891.99
Ф-48
С192вN174
Фидри.
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ՖԷԴՐԻ

Стихотворенія.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՕՏԵԼՆԵՐ

2003
Тифлисъ.
Типографія Т. М. Готшянца.
1904 г.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտիհեանց
1904

Дозволено цензурою, Тифлисъ. 9 Января 1893 г.

50009-ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ
Ա. Մասնիկյանի անվան
им. А. Мясникяна
35900-66

Այս փոքրիկ գրքոյկները, մին կաթնակեր եւ միւսն վնցաւեայ հասակի մէջ հրեշտակացած փոքրիկ, հայկի եւ փոքրիկ Աղութի յիշատակին։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նրանց, որոնք հետաքրքրում են իմ գործերով, հաղորդում եմ որ թատրոնական, վիպական և այլ գրուածներիս հետ միասին, «Բանաստեղծական Մոդէլներ» տիտղոսի ներքև, որ իմ ուղղութիւնս է ուրուագծում, կը հրատարակեմ սրանից յետոյ արևելեան և արևմտեան բարբառներով փոքրիկ գրքոյկներ, որով հնարաւորութիւն կ'ունենամ քիչ ծախսով իմ մշտաեռ նիւթերիս մէկ մասին կեանք տալու։

Յանկանում եմ իմ գրական գործերին մի հիմնարկութեան ձև տալ, իմ մտքի բոլոր արտադրութիւններն ուրեմն առանձին գրքերով կը հրատարակեմ, ինչպէս մինչև հիմայ սրանից յետոյ ևս անկախ հայկական մամուլից։ Իմ աշխատութիւնները կը շարունակեմ անընդհատ, իսկ տպագրութիւնը, եթէ միջոցներ չունենամ, կը յետաձգեմ, այս է իմ որոշումս որ տեղ էլ լինեմ։ Այս որոշումն համակրելի՝ բայց նիւթապէս վտանգաւոր է տեսնում իմ փորձառու բարեկամն, Պարիզից Էջմիածին զարդանկարելու հրաւիրուած պ. Ս. Պէզիրճեան։ Արուեստի և գիտութեան առջև չքանում է արդարև նիւթականի կարևորութիւնը. հէնց ինքն, ծերունազարդ արտիստը արուեստի սիրովն է որ այսօր ուզում է ուսումնասիրել Կովկասի հնութիւնները, և, իբրև արևելեան ոճի գծագրութիւններ, ընծայել Եւրոպային, թէև կէս դարու փայլուն ծառայութիւններ մատուցած է արուեստին և, իբրև առաջնակարգ արտիստ, գնահատուած ակադեմիաներից և պետական ներկայացուցիչներից։ Իմս, իբրև մշտական զբաղում, ի հարկէ տարբեր է, սակայն անյոյս չեմ բոլորովին որ նիւթականի անապատին մէջ վեց տարի դեգերելուց յետոյ՝ եթէ ոչ այստեղ՝ գոնէ մի այլ տեղ կը հանդիպեմ յաջողութեան փոքրիկ օազիսների ևս։

ՄԻՇՏ ԱՊՐԷԻՆՔ.

Ի՛նչ լաւ կը լինէր, եթէ մարդիկ չմեռնէին,
Եւ յաւիտեան մի բուռ մոխիր չդառնային,
Այլ այս երկրում, իբրև անշէջ մեծ մեծ կայծեր,
Շարժուէին միշտ, փայլեցնէին կեանքի գիշեր,
Միշտ ժպտային, միշտ երգէին, առատ առատ,
Վայելէին բարիք, հաճոյք, սէր անընդհատ։
Ի՛նչ յաւ կը լինէր, եթէ սև կամ շէկ մազեր
Չտեսնէին տխուր աչուն և ցուրտ ձմեռ,
Այլ թարմ հիւթեղ ունենային միշտ նոյն գարուն,
Փափուկ մետաքս, այնքան գունեղ, որքան փայլուն։
Ի՛նչ լաւն էր, ախ, եթէ չթօշնէր այս կայտառ դէմք,
Ուղիղ քամակ, ուժեղ բազուկ, առողջ ամէնք,
Եւ ներդաշնակ մի լարուածքով նրանք բոլոր
Կատարէին իրենց պաշտօն լաւ ամէն օր։
Ի՛նչ լաւ կը լինէր, եթէ ժանտ մահու սարսուռ
Չխռովէր ուրախ ժամեր, յանկարծ տխուր,
Եւ ստորերկրեայ այն ահաւոր և նեղ նկուղ
Չահաբեկէր երբեմն երբեմն հոգին ու ուղ,
Այլ երկրային անմահութեան քաղցր ըմբռնում
Առթէր սրտերին յաւերժական գոհացում։

* * *

Բայց այս երանիներ ասել են և այլ մարդիկ,
Որի համար կատարել է Յիսուս իր պարտիք,
Նրա խոստացած այն երկնային Արքայութիւն
Չէ նա մեզ աննպատակ օթևան կամ մի տուն,
Մարդկային ցանկութեան իրագործումն է ճիշդ այն,

Որի շնորհալի հեղինակն է Յիսուս միայն.
Սակայն մեր երազած երկրային կեանքի նկար,
Այնտեղ երևում է մի աշխարհ սուրբ և արդար,
Կոշտ և մեղաւոր իրականութեան փոխարէն՝
Իդէալական աշխարհ, պայծառ և նկարէն։
Այնտեղ չեն գործել մարդիկ ամենևին չարիք,
Այլ, իբրև հեզ, սուրբ և ազնիւ, միշտ՝ բարիք։
Այնտեղ հոգիք չունէին երբէք ոչմի զբաղում,
Այլ միմեանց սիրում և սուրբ Աստուած փառաբանում։
Այսպէս ուրեմն մեր դժգոհութիւնների հարցման
Տուած է մեզ Յիսուս գոհացուցիչ պատասխան։

Նազելի կոյսը

Ինչու՞ աչքերս, նազելի կոյս,
Միշտ դառնում են դէպի քեզ,
Ինչու՞ քայլերս կամքիցս անկախ՝
Հետևում են, ուր գնում ես։
Ի՞նչ ունիս դու այնքան չքնաղ,
Այնքան գրաւիչ, այնքան սիրուն,
Որից զուրկ են շատ ուրիշներ,
Թէև շքեղ և շողշողուն։
Մի բան ունիս, գուցէ դու ևս
Մինչև հիմա իմացած չես։
Փարթամազգեստ մի աղջկայ հետ
Գնում էիք դուք նազեցեմ,
Նրա հասակ, նրա պերճանք
Դիւթեց սիրտս, ինչ թագցնեմ.
Դու ղգացիր, ու բարկացար,
Խոժոռ, խոժոռ ինձ նայեցիր,

Ո՛հ, այդ զայրոյթ այնքան անմեղ,
Այնքան գողտրիկ, այնքան քաղցր էր
Որ ես նրան իսկոյն թողի
Քեզ նայեցի, քեզ սիրեցի։
Խօսում էիք մի օր դարձեալ
Նորաբողբոջ էակի հետ,
Փափուկ այտեր, ոսկի մազեր
Գրաւեցին ուշս իսկոյն և եթ.
Յիշեցրիր, իզո՞ւր, իզո՞ւր,
Տխրեցար վերջ աղու աղու,
Այդ երևոյթ, ո՜հ։ ինձ թուեց
Այնքան հատու, այնքան ազդու,
Որ նրանից աչքս դարձրի,
Քեզ ժպտեցայ, քեզ սիրեցի։
Դաշնամուրի առջև նստած՝
Ածում էր մի շատ գեղուհի,
Ձեռքի շնորհը, վեհ կերպարանք
Դարձնում նրան ինձ դիցուհի։
Դիտեցիր դու, և խռոված՝
Դուրս գնացիր, ո՞ւր, չգիտեմ,
Ո՜հ, մանկական քո այդ վարմունք
Երևեց ինձ այնքան վսեմ,
Որ իսկ և իսկ դուրս վազեցի
Քեզ փնտրեցի, քեզ սիրեցի։
Դէ՛, այժմ ուրեմն, ասա՛, խնդրեմ,
Հասկացար դու անտարակոյս,
Ի՞նչ ունիս դու այնքան անոյշ,
Այնքան ազնիւ, այնքան քնքուշ,
Մի՛ մտածիր, ահա կ՚ասեմ,

Ունիս սրտի մի փափկութիւն,
Կամ միևնոյն է ասել թէ՝
Զգայուն հոգու քնքշութիւն։

ՄԱՅՐԱԿԱՆ ԿՍԿԻԾԸ

Մի՛ փակիր, Արմենա՛կ, քո պայծառ այդ աչքեր,
Առանց քեզ մայրիկդ կը խենթնայ վշտակիր,
Առանց քեզ, չգիտես, չի ապրիլ նա երկար,
Խաւար կը դառնայ նրան այս ամբողջ աշխարհ։
Նայիր քո սիրած եղբօրդ, փոքրիկ Լևոնիս,
Տես, ա՛խ, ինչպէս է ինձ հետ քեզ համար լալիս։
Վեր կա՛ց, տես, թէ ինչպէս ընկերներդ փողոցում
Վազվզում, բղաւում, քեզ են՝ սպասում։
Բայց, ա՜հ, ինչ եմ տեսնում, իմ որդին, որդին,
Հոգեվարքում աւանդում է ահա հոգին։
Դուք, ո՛վ Երկինք, ձեր գթութեան բոլոր ուժով
Այս թշուառ մօրը օգնութեան, ա՛խ, հասէք շուտով,
Մի՛ խլէք ինձանից իմ անուշիկ որդուն,
Նա դեռ չէ թևակոխած առաջին գարուն.
Նրա փոխարէն իմ կեանքը, իմ կեանքը դուք առէք,
Թողէք, ա՛խ, թողէք իմ գառնուկին հեզ ու հէք։
Իր հօրը գէթ խնայեցէք, որ՝ ծերութեան մէջ,
Միայն զաւակի սիրովն է ապրում անշէջ,
Բայց, եղո՛ւկ ինձ, փչեց արդէն որդիս իր շունչ.
Անոյշ քթից էլ չի լսւում ոչ մի շշունչ,
Ա՛խ, իր մարմին, մատաղ մարմին, թէև տաքուկ։
Բայց խաբուսիկ մի երևոյթ է վաղանցուկ,
Շատ չի քաշել, հոգի՛ս ելնէր, ահա և նա

Տժգունելով, ո՜հ, յաւիտեան կը ցրտանայ։
Մի՛ արգելիր ինձ, բարեկամ, թոյլ տուր որ ես
Համբուրեմ, համբուրեմ կուշտ իմ որդու երես։
Վերջին անգամն է որ շրթունքս իր երեսին
Մայրական բուռն, անչափ սիրով պիտի հպին։
Թոյլ տուր որ ես սիրեմ հոգուս իմ հատորին,
Փայփայեմ իր սպիտակ և քնքուշ մարմին.
Գերեզմանի մութ և խոնաւ այն նեղ հորում
Էլ չի տեսնել իր մայրիկի մեղմիկ շփում։

ՄՐՋԻՆԻ ԲՈՅՆԸ

Խղճալի ամբոխ, մրջինի միլլիոններ,
Վտանգաւոր մի տեղ շինել էք ձեր բոյն,
Քաշուեցէք, հեռացէք շուտով՝ վար կամ վեր,
Որ չջարդուի ձեր այդ բազմութիւն անհուն։
Մի արդար պառաւ վերցրեց ահա ոտ,
Եւ ձեզանից հարիւրներին, ինչպէս կոյր,
Ճզմեց, փշրեց անխղճաբար այդ քոստ,
Ու երկիւղած առաջ գնաց անտխուր։
Երեխաների մի մեծ խումբ վազելով՝
Դալիս է ահա դէպի ձեզ ուղղակի,
Սա ևս սպանեց ահագին թուերով
Մրջիններիդ և գնաց առանց ցաւի։
Մի քանի ազնիւներ ևս սա մերձակայ
Տեղից եկան, հասան ահա, կարգին ձեզ
Կոխեցին և ասացին ինչ վնաս կայ,
Կոխեցին ու հեռացան լուրջ ու հեզ։
Բայց, գիտէք, բնութիւնն է շատ անարդար,

Որ չէ տուած ձեզ ոչ մեծութիւն և ոչ խելք,
Որ երևաք և խոյս տաք, որ անդադար
Զջարդուէք, և ձեզ համար գտնէք մի ելք։

Ամոթխած օրիորդը

Կանայք և տղամարդիկ միևնոյն կնոջիցն են ծնուում,
Միևնոյն բաղադրութիւնն ունին իրենց մարմնի կազմուածքն,
Ինչու՞ սակայն նրանք այնքան համաբձակ և մինչև իսկ անպակաս
Իսկ մենք երկչոտ, ամաչկոտ գալիս ենք այս կեանքի մեծ ատեան.
Ինչ՞ցն է արդեօք արտայայտուելու այս զանազանութիւն,
Ինչու՞ չպէտք է մէկ լինէին մեր և նրանց զգացում։
Ինչու՞ նրանք կեղծ քաղաքավար կամ չափազանց կոպտաբար
Մօտենում, առաջարկում իրենց քմայք կամ սրտի սէր,
Եւ երբ զայրացած մերժում ենք մենք նրանց կամ վրդովում,
Գալիս են նորից թախանձում, կրկնում իրանց միևնոյն սէր,
Ինչու՞ կանայքս չենք եղած և չենք լինիլ իսկի այդպէս,
Այդպիսի բան, եթէ անենք, կը սևացնի մեր երես։
Օրինակ, ես ցանկանում եմ ասել իմ երիտասարդիս.
«Մօտ արի, գգուիր դու ինձ, այրուում եմ ես, իմ միակ լոյս,
«Մօտ արի, նազ չեմ անի, տաք զգացումով սիրիր դու ենձ,
«Չէս զգում որ մագնիտով կապուած է սիրտդ անմեղ հոգուս։

Բայց երբ գալիս է ճիշդ ժամանակ, կարկամում է, ա՛խ, լեզուս,
Եւ ես տխուր ու յուսահատ ետ եմ քաշւում նորից սուս փուս։
Այնուհետև, քուն լինիմ՝ եթէ արթուն, տանջւում եմ շարունակ,
Մաքովս նրան եմ տեսնում, ու հոգովս գրաւուում նրանով,
Մինչև որոշած րոպէին՝ գնում նորից նրան փնտրում,
Տեսնում, փոքր ինչ հրճւում, դառնում նորից զբաղւում նրանով։
Ա՛խ, երևի, շատ կը չարչարուեմ անցկացնել այս ծարաւ,
Մինչև որ, աւա՛ղ, կը լինեմ ես կատարելապէս պառաւ։
Պատճառ, գիտէք թէ ինչ է, խստապահանջ մարդիկն են, որ մեզ
Ենթարկած են ամօթխածութեան անհաւասար վիճակի,
Ուր արուեստական սեղմում դարձած է բնական զգացում,
Եւ որ սակայն վերադառնում է բնականին ուղղակի։

Ցաւակցութիւն

Կեանքն այս աշխարհում, ասում են որ նման է ճիշդ սանդղին,
Երջանկութիւն ցած է իջնում թշուառութիւն վեր բարձրանում։
Տեսնո՞ւմ էք այս փայտին յենուած տխրատեսիլ խեղճ ծերուկին,
Մի ժամանակ առողջ էր դա, չունէր իսկի ցաւ իր մարմնում,

Մեղմացրէք դժբաղդութիւնը, մի զլանաք յարգանք նրան,
Մի մոռանաք որ մի օր և դուք կը լինէք նրա նման։
Տեսնում էք այս պատառատուն հագուստներով ընտանիքին,
Որ փողոցում ցրիւ եկած՝ սրան, նրան մօտիկնալով՝
Ողորմութիւն է ուզում և պաղատում թախանձագին։
Մի ժամանակ շատ ճոխ էր սա և բաղդը փչում էր աջողհով,
Գթացէք, մի օր սրանք կամ ժառանգները կը հարստանան
Իսկ դուք կամ ձեր զաւակները կը լինէք ճիշդ սրանց նման։
Տեսնում էք այս շղթայակապ ժժգոյն դէմքով բանտարկեալին.
Որ նայում է մեզ, զգում՝ երան ամօթապարտ,
Մի ժամանակ զգացման տէր՝ խօսում էր սա պատուի մասին,
Զղջանքի նայուածքներով մի խայթէք դուք նրան տարապարտ,
Մի օր անպատճառ կը վերստանայ իր կորցրած պատիւն,
Իսկ դուք կամ ձեր զաւակները կը բանտարկուէք ոնէ առթիւ։
Լսում էք դուք դառնակսկիծ ողբ ու կոծեր սա պալատից,
Դաժան մահը անխնայաբար մի վաղաժամ կեանք է տարած,
Մի լինէք չարախնդաց, եղէք իսկական կարեկից,
Յիշեցէք որ միայն նրանց չէ վիճակուած կսկիծն ու լաց,
Բոլոր մարդկանց, անկասկած, նոյնպէս և ձեզ պահուած է մի օր
Արտասուքի այն կայլակները, ինչ որ նրանք թափում այսօր։

ՓԻԼԻՍՈՓԱՆ

Մի զգայուն և նրբամիտ փիլիսոփայ
Ցրուեց մի օր երեխաներին պակլավա,
Իր քրոջ արդեօք թէ իր եղբօր աղջկան
Տուեց մեծերից աւելի քան բաւական
Երկրորդին, իր մէկ ազգականին՝ երեք հատ,
Որ զգացրեց աչառութիւն բացայայտ.
Երրորդին, իր հարևանի որդուն՝ երկու,
Չորրորդին՝ մէկ՝ իրը անյայտ մարդու որդու,
Հինգերորդին, ոչ հաւատակցի, մի կտոր,
Սակայն իսկոյն խառնուեց սիրտը, դարձաւ պղտոր,
Փոքրիկներից մինի շառագունած վարդայտ,
Միւսի կապոյտ աչքն, ու երրորդի լայն ճակատ
Արտայայտեցին դժգոհութեան մի բողոք,
Թէ նա թէ տնիրաւ էր, և թէ անողոք։
«Սակայն ինչու, լուզուած ասաց նա ինքն իրան,
Հաւասար պատմա դնէի իրանց բերան.
Ո՞վ այդքան անաչառ, այդքան շռայլ եղել,
Ոչոք, ոչ մեր սեռ և ոչ իգական սեռ։
Դէպ անձ տարբերական մերձաւորութիւնները,
Եղած են հին հին ժամանակներից ի վեր.
Սակայն ինձնից, իբրև ազնիւ և վեհ անձից,
Սպասում են սիրտ անաչառ և կարեկից։
Իւրաքանչիւրն ասում է ինձ, գիտեմ, այսպէս.
—«Թէև պա՛ռոն, ես մօտիկ չեմ սրաչափ քեզ,
Բայց նրա պէս ունիմ ես սև դանգուր մազեր,
Ծարծիր դէպ՝ մեզ դու հաւասար միևնոյն սէր։
—Թէև ձեռքերս սրաչափ չեն գէր, սղիտակ,

Այլ ես ունիմ խստակ աչքեր, իբրև վտակ,
—Իսկ ես թէպետ կալճահասակ եմ և վտիտ,
Բայց կարող եմ մուտիկ լինել էլի սրտիտ։
—Եւ ես, իրա՛ւ, ունիմ խիստ չար մի երևոյթ,
Բայց Աստուածն է, որ տուած է ինձ այդ բնոյթ»։
Փիլիսոփան արդահատեցաւ խորապէս
Ու ամէնքին էլ վարձատրեց լիապէս։

ԼՈՒՍԻՆ

Քերթողների ամէն մի քնարին, քառորդ Լուսին,
Տարբեր և զմայլելի մի նուագ ես ներշնչում միշտ,
Չի քո պատկեր, իբր հայելի, մէկին և միւսին,
Արտացոլում է սրտի տարբեր հաճոյք, տարբեր վիշտ։
Ինձ ևս, սիրուն Լուսնեակ, իբր շնչաւոր մի գեղանի,
Թւում ես մերթ շատ ամաչկոտ և հեզիկ մի հարսնիկ,
Մերթ՝ երկնաբնակ մի տիկին, հպարտ և նազանի,
Եւ մերթ՝ մի պոռանի, մեղամաղձոտ, տխրազդեցիկ։
Բայց այժմ դիւթուած է սիրտս քո իրական պատկերից,
Որի ներկան և նախնի վսեմ, տխուր յիշատակ
Հրաշալի ճշդութեամբ մեզ երկրայնոցս բաց արեց
Մեր մարդկային հանճարեղ աստղաբաշխից հեռադիտակ։
Իրա՛ւ է որ դէմքիդ այդ սև սև բծերն, քո աչքն ու քիթ
Բարձրաբերձ լեռներ են, որոնք ծոցիցդ դուրս են եկած
Հրաբխային ժայթքումներով, կամ ստուերախիտ
Ծառաշատ անտառներ կամ ովկիանս լայնատարած։
Բայց ինչ, չէ՞, ասում են. սառած է քո ամբողջ մարմին,
Եւ չունիս դու ոչ անտառ ոչ ջուր և ոչ մթնոլորտ
Ոչ էլ ուրեմն հսկայական մամուտն ու բորենին,

Արարածոց տիրապետող մարդն ու իր ժառանգորդ։
Ուրեմն անկենդան փոքրիկ մի աստղ ես ապառաժուոտ,
Որի նպատակն է, երբ մայր է մտած Արեգակ,
Անդրադարձնելով արև, փարատելով սև մութ՝
Ծառայել Մեծաւորին իբրև հլու արբանեակ։
Եթէ Աստուած այդ է սահմանած միայն քեզ պաշտօն,
Լուսին, Լուսին, դա ևս ինքբստինքեան չէ գործ աննշան,
Մխիթարելով երկիր, լոյս ձգելով ամէն տուն,
Արևից յետոյ մի աստղ ես լինում մեզ պատուարժան։
Սակայն եթէ սխալ է այս կարծեցեալ հաւատիք,
Եւ դու ունիս բուսական ու շնչաւոր արարած,
Ապա միայն անասուն, թէ մեզպէս և մարդիկ,
Խնդրեմ, ահա դրանով եմ ես շատ հետաքրքրուած։
Ե՞ն արդեօք նրանք մեզ նման զարգացած բանական,
Ունեցե՞լ են վեհի գաղափարն, իրենց պաշտելին,
Ի՞նչպիսին արդեօք, կոչտ, թանձրացեա՞լ, թէ վերացական,
Թէ դարձեալ մեզպէս խնկարկութիւն նոյն Տէր-Միածնին։
Ի՞նչպէս են ապրում քո մայրական ծոցում, քրտնաթոր,
Ունե՞ն շարժառիթներ լինել մեզպէս չար և ագահ,
Թէ նրանց նիւթն էլ, կազմութիւնն էլ, կեանքն էլ չեն,
ինչ որ
Գաղափարուելով այստեղից՝ ենթադրում եմ թէ կայ։
Հետաքրքիր են գէթ դէպի ալևոր Երկրագունդ,
Դէպի իրենց երկնքի խոշորագոյն մոլորակ,
Զգո՞ւմ նրանից ալիւն, հրայք և շունչ սրտաթունդ,
Սրտի կարօտ, մտքի օրօր կամ հոգու զարկերակ։
Երևակայո՞ւմ, ախ, մեր վեհ գոյութիւն հոգածին,
Տածո՞ւմ սրտի խորքերից եղբայրական բարկ բախիւն,
Եւ ցանկալով առողջութիւն և բարիք ջերմագին,

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГСС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-ԱՌ ԳԱՍ
35500-66

Ուղարկում եմ անդունդներից բարեացակամ մեզ ողջոյն։
Երազում խոկ և տենչանք անծայրածիր մեր միջոց
Կտրել, մտնել իդեալական մեր այս կլիման,
Տեսնել մեզ, վերցնել մոգական հինաւուրց ծածկոց
Եւ թանկագին լուրերով դառնալ դէպ քեզ հա՛րևան։
Մի կարծիր, Լուսին, որ զառանցանք է սա միամիտ,
Կամ դատարկաբանի անմիտ ուղեղի մի զրոյց,
Մեր մեծ մտքերն են փայփայում, մշակում այդ նոր միտք
Ունենալով իրենց յառաջդիմութիւն ուղեցոյց։
Սակայն եթէ պատանուս հաւատալ չէ ներելի
Մոլորակային այդ հեռաւոր հաղորդակցութեան,
Դէթ ներելիէ ասել, գիտութիւն, այժմ մանկունի,
Չի թոյլ տալ բնաւ որ չվերլուծուէք դուք յաւիտեան։
Կը ցանկայի ինձ Երկինք մի դար ուշ լինէր ծնած,
Զրպէս զի ես տեսնէի գաղտնիքներիդ մերկացում,
Կը ցանկայի այրուող միտս այս հմայք չճաշակած՝
Զբաժանուէր իմ գլխից, գնալ, ցնդել միջոցում։

ԺԱՄԱՆԱԿ, ՏԻԵԶԵՐՔ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ

ՀԱՐՑԱՍԷՐԸ.

Դո՞ւ ես շատ մեծ՝ թէ Տիեզերք, ով Ժամանակ,
Դուք տարեկից, թէ եղբայր էք կրտսեր, աւագ.
Քանի՞ միլիոն դարեր են, ինչ դուք ապրում էք,
Քառալիոններ, հնգիլիոններ էլ տեսել էք։
Ցիշում էք թէ ի՛նչպէս կազմուեց մեր Երկրագունդ,
Եւ ո՞ր տեղից մեր մարդկային առաջին հունտ,
Ի՞նչ մեծ ազգեր, ի՞նչ մեծ մարդիկ անց են կացել,
Ի՞նչ մեծ դէպքեր, մեծ աղէտներ անհետացել։

ԺԱՄԱՆԱԿԸ

Մենք էլ չգիտենք, թէ իսկապէս ո՛վ է շատ մեծ,
Մենք տեսել ենք միշտ միմեանց այսպէս անեղծ.
Ձեր միլիոններ հաւասար են մեր օրերին,
Մեր հաշիւները դուք չգիտէք ամենևին։
Ձեր հարցումները երեկուայ մանր, մանր բաներ,
Մանր բանը ես չեմ լիշում թէ ի՛նչպէս էր։
Հարցրու ինձնից, քանի անգամ Տիեզերքում
Դու տեսել ես յարդդողային յեղաշրջում.
Համաստեղութիւնների մէջ ո՞րն է շատ հին,
Եւ ո՞րն է ամենից հսկայ և ահագին։
Արևային ի՞նչ դրութիւններ են ցարդ շիջել,
Եւ քանիները դուրս են եկել անարգել.
Տիեզերքի ո՞ր կէտում ի՞նչ մեծ աւերած,
Կատարել են գիսաւորները դարեր առաջ։

ՀԱՐՑԱՍԷՐԸ

Սպասի՛ր ուրեմն, ով բազմադարեան Ժամանակ,
Որ անեմ ես անդր-յաւիտեան առաջարկ,
Ո՞ր տեղից էր այն նախանիւթ կամ միգամած
Որից կազմուեց Տիեզերքի ամբողջ շինուած։

ԺԱՄԱՆԱԿԸ

Մի հարց է դա, մի հարց շատ մեծ, անքննելի,
Տիեզերքին թերևս լինի փոքր ինչ յայտնի,
Թերևս գիտէ նա իր մարմնի սկզբնանիւթ,
Թէ ո՞ր տեղից և ի՞նչպէս էր նրա ընոյթ։

Դիմի՛ր նրան, հարցրու նրանից վստահ, վստահ,
Նա կը պատմի քեզ ամէն բան, ինչ որ կայ։

ՀԱՐՑԱՍԷՐԸ

Իսկ դու ասա՛, ով զարմանահրաշ Տիեզերք,
Եթէ խօսել կը զիջանես ինձ հետ երբէք,
Աստղերի մէջ ինչ տեղ ունի մեր այս Երկիր,
Յայտնի՞ է արդեօք որպէս մի գունդ շատ ընտիր,
Յայտնի՞ է արդեօք որպէս մի գունդ շատ շատ հին,
Որպէս բնակարան մեր մարդկային մեծ ազգին։
Նրա մասին խօսո՞ւմ են շատ լուսաւորները,
Ասո՞ւմ են որ շատերից է նա շատ վեր։

ՏԻԵԶԵՐՔԸ

Այդ ո՞ր հիւլէն է սոսկավիթխար զանգուածիս,
Որի վրայ պարծում ես այդպէս խօսելիս.
Իմ մարմնի այն մասը, որ կոչւում է ծիրկաթի,
Հազիւ է լինում ինձ համար նկատելի։
Աստղերի այն հոլերը, որք սփռած են դէս ու դէն,
Նշմարում եմ ես իբրև արատ նիւթեղէն,
Իսկ նրանց նոյն իսկ ամենամեծն առանձին
Չեմ տեսնում իսկի, իբրև մի իր խիստ չնչին։

ՀԱՐՑԱՍԷՐԸ

Ո՜հ, ի՜նչ սոսկալի վիշապ ես դու լայնատարած,
Քեզ պէս մարմին ոչ լսուած է ոչ տեսնուած։
Ո՞րտեղից ո՞րտեղ տարածւում է քո սահման,

Եւ ինչքա՞ր արդեօք կան անդր քան քո այդ՞ վախճան.
Դատարկութիւն, յաւէտ այդպէս դատարկութիւն,
Համաստեղութիւնների շարունակութիւն...
Բայց մինչև երբ, մինչև ո՞ւր յառաջ, յառաջ,
Ա՜հ, դրա մասին մնում եմ ես զարմացած։

ՏԻԵԶԵՐՔԸ

Միջոց, դատարկութիւն իմ մարմինս է ինքնին,
Աստղերն՝ իմ ոսկորներս, լոյսն՝ իմ աչքն ու հոգին,
Իմ մեծութիւնը չունի բնաւ չափ ու սահման.
Նա մի անհունութիւն է յաւիտենական։

ՀԱՐՑԱՍԷՐԸ

Այս ևս ուրեմն, ով գերահրաշ Մեծութիւն,
Որքա՞ց քո սաղմն, որի՛ց և երբ ծնուեցիր դուն։
Ի՞նչ կար միջոցումը յառաջքան քո ծնունդը,
Սրանց խնդրելը ես կարծում եմ չէ՞ անվայել։

ՏԻԵԶԵՐՔԸ

Դրա մասին ի՛նչ կարող եմ ասել որոշ,
Գիտեմ միայն որ էի ես երբեմն քաոս.
Իսկ ենթադրել մի ժամանակ, երբ ոչ նիւթ կար,
Ոչ էլ միջոց, դրան իսկի ինձ թոյլ չեմ տալ.
Միջոցի տեղ ինչ կար ուրեմն, իսկ նիւթն ապա
Ո՞րտեղից, երբ բաց ինձանից ոչինչ չկայ։
Իսկ կարծել թէ միշտ միջոց կար և միշտ նիւթ կար,
Դա ևս կարծում եմ քոլորովին չէ՞ հնար։

Իմ ներդաշնակ կազմութեան մէջ տեսնում է
Կարգ ու կանոն, որոնցով նա միշտ վարում է
Այնպէս խաղաղ, այնպէս հանդարտ ու անվնաս,
Որ իսկապէս զարմանում եմ ես հանապազ։
Իմ ամէն մի մասնիկի մէջ ես տեսնում եմ
Մի զօրութիւն, մին քարշում է ճիշտ դէմ ու դէմ
Միւսն շուտով փախչիլ, հեռու գնալ է ուզում,
Եւ հուսկ ճարհատ՝ ման է գալիս նոյն շրջանում։
Վերջապէս ամէն բանում երևում է մի
Ոյժ, մի զօրութիւն և կամ մի շունչ, մի հոգի,
Որք գալիս են մի հզօր Ձեռքից, որին ես
Կոչում եմ «Ամենակալ, Վեհագոյն Ես»։
Նա է անշուշտ իմ գոյութեան նախապատճառ,
Որին ծառայում եմ ես անգիտակցաբար։
Իմ էութիւն, իմ բնութիւն և իմ օրէնք
Նրա հզօր բազուկի մէկ խաղալիքն են ամէնք։
Նրա ահեղ կերպարանքից իմ ողջ մարմին
Պատկառում, շառագունում է տենդագին.
Նրա ահաւոր ցասումից ուժգնապէս
Ցնցւում, զարհուրում է իմ մեծ գոյութեան վէս։
Դիմի՛ր նրան, խնդրիր նրանից խոնարհաբար,
Նա ամէն բան կը հասկացնէ քեզ բառ առ բառ։

ՀԱՐՑԱՍԷՐԸ

Ա՛խ, դու անեզր Մայր Բնութիւն, ի՛նչ ես ասում,
Այդ գերագոյն Եսը լաւ ծանօթ է մեզանում,
Նրան մեր Երկրագնդում կոչում են Աստուած,
Որ անսկիզբ է և ոչ ոքից չէ եղած,

Նրան մեր այս աշխարհում պաշտում են մարդիկ,
Նրան սիրում են ամենայն ազգք և ազգինք։
Նա իր Սուրբ Գրքում պատմել է մեզ թէ ինչպէս
Ստեղծել է այն ամէն՝ ինչ որ դու այժմ ասում ես.
Բայց այլ տօնով, այլ ձևով և տեղ-տեղ մութ,
Դիմեցի ձեզ որ լինէի քաջ հետամուտ։
Մեծ գաղտնիքները չէ յայտնած այն վեհ խորհրդով,
Որ մենք ապրենք և մնանք միշտ աստուածագով։

ՀԱՆՃԱՐԸ

(Վ. Հիւգո)

Տանդանդները ինձ թւում էին թոյլ և անհամ,
Հանճարներից մնում էի անբաւական,
Մի ներքին ոյժ մղում էր ինձ դէպ ասպարէզ,
Մի մեծ պահանջ ինձ ասում էր իջիր հանդէս.
Դուրս եկայ ես և ժողովուրդ հետաքրքիր
Նայեց դէպ ինձ, դիտեց քայլերս նա ուշադիր
Միջակութիւն, ոչնչութիւն խիստ մոլեռանդ՝
Պատուիրեցին չափաւորել ինձ իմ եռանդ,
Զոյիլները, իբրև բարեկամ, խորհուրդ տուին
Հրաժարուել գեղարուեստից բոլորին,
Ծիծաղեցի, «երեխաներ» ես կոչեցի,
Ինքնանվստահ առաջ գնացի ուղղակի։
Իսկ չնչինութիւնը որոշեց թաքուն կերպով
Գործել ինձ դէմ, ինտրիգներ սարքել անվրդով։
Նախայրիքս սակայն ցնցեց յանկարծ բոլորին,
Որից իրենց շատ խոշոր դասեր վերցրին։

Վերցրին, բայց լուռ կեցան, որպէս զի...
Չհասկանայ ինչումն է իմ և իրենց բան։
Գուցէ, ովգիտէ, կանցկենայ ներկայ վտանգ,
Եւ չի խռովիլ իրենց գրական մեղկ կեանք։
Անուս...չունեցան բաւական ճաշակ,
Գնեց իմ գրքից նա մի քանի օրինակ,
Քայքայուած Նիւթականս հոգեվարքի մեջ էր,
Երբ վերջացրի իմ միւս հրաշակերտներ,
Ուխտեալ թշնամիներս զարհուրած՝ կատաղած՝
Ինձ անուանեցին թունդ հեթանոս, անաստուած։
Ուրիշ պարտիներն ևս ինձ դէմ գրգռեցին,
Եւ ամեն կողմ աչալրջութեամբ հսկեցին,
Որպէսզի թոյլ չտան որ երկունքներս գան լոյս,
Որ նեղ ընկած՝ ձեռ քաշեմ գործերից անյոյս։
Իրա՛ւ, երկերս չգտան հրատարակող,
Միայն նոյն խմբերից մի քանի բանագող,
Մի կերպ սակայն տպեցի մի փոքրիկ գործ ևս
Որ ջախջախեց նրանց ուժն վերջնականապէս։
Ի՞նչ սոսկալի տիպերից են արդեօք սրանք,
Եւ ինչո՞ւ իրանց այս տանջանք, ինձ հալածանք։
Հայրենամոլներ են արդեօք խիստ ծայրայեղ.
Այդ ևս ճիշդ է, այդ ցոյց տուել են ամէն հեղ։
Նախանձախնդիր ևս երբ թէ գեղարուեստին,
Գործում սակայն այդ չի նշմարւում ամենևին.
Հայհոյում են ինձ, պասկուիլներ են ինձ յօրինում,
Եւ միաժամանակ ինձ են արտագրում։
Ա՜, օձեր, կարիճներ են թունաւոր և չար,

Եւ ես, երևի, անժամանակ մի հանճար։ *)

ՇԷՔՍՊԻՐ

Հազար հինգ հարիւր վաթսուն և չորսին երբ ես ծնուեցի,
Իմ վեհ գալուստը չողջունեց բնաւ ոչ մի քաղաքացի.
Հազար հինգ հարիւր եօթանասուն ութին, յիշում եմ,
Երբ կարիքն և բնազդ մղեցին ինձ Կենտրոնական բեմ,
Լօնդօնի գոռոզ բնակչութիւնը չողջունեց էլի ինձ.
Մի հասարակ մահկանացու էի, ուրիշ ոչինչ։
Կրօնի երկնառաք մի հիմնադիր չէի որ Տէր
Մարգարէներով աշխարհին նախապէս աւետէր,
Թատրոնական տաճարի ընծայացուն էի ես
Հռչակի համար ձիրքս պէտք է տեսնէր հանդիսատես։
Երկիւղով մի պահ թատրոն դիտելուց յետոյ՝ ես համբակ՝
Փայլուն հանդէս եկայ կիսավստահ, անհամարձակ։
Սակայն յանկարծ գլխիս ցայտեցրեց հանճարս լսվան,
Ու դուրս եկան Համլէթ, Մակբէթ, Օթելլո, Լիր արքան

---

*) Մարսէլլում Վ. Հիւգոյի եօթնամեայ կեանքը. Մարսէլլի ինտելիգենցիան, աննչան բացառութեամբ, զինւում է Հիւգոյի դէմ. նախ աշխատում է գրելը նրան արգելել, և երբ այդ չի յաջողւում, պահանջում է որ նա իր գրուածները իրենց թերթերի մէջ տպագրէ, որպէս զի նրա փառքի մէկ մասն իրենց սեփականացնեն, և երբ այդ ևս չի յաջողւում, մեծ վարձատրութեան խոստումներով, նրա վստահացած անձանց միջոցով, գրադարանապետների ձեռքով, ձեռք է բերում նրա անտիպ գրուածքները և կարգալով ու արտագրելով օգտւում, ուղղութիւններ գծում և այլ և այլ յօդուածներ, մատենագրական

Մարդու ներկայ, անցած, ապագայ տիտանեան տիպերը,
Սրտի գաղտնիքների բազմագունեան ամբողջ պատկերը։
Փայլուն աստղերը խաւարեցին ճառագայթիս առջև,
Եւ մեծահռչակ կլասիկ գրուածներից մինչև
Կեղծ ռոմանթիկ հեղինակութիւնները տեղի տուին,
Ստիպուած իմ արտակարգ հզօրագոյն մեծ ուժին։
Թէև Լիւսին և Վոլթէր, Ֆրէդէրիկ, Ֆիլիպ, Կրին
Սուր սլաքներ ուղղեցին մարմնացած իմ հանճարին,
Սակայն նրանք դիպեցան ու ետ դարձան ծայրատած,
Ինչպէս ձիւնագնդակ բերդից ետ է դառնում փշրած։
Ռասին, Քոռնէյլ, որոնց անունն լիշում խրոխտ Վոլթէր,
Ընդունում են ինձ, որպէս թատրոնի միապետ տէր։
Վոլթէր թող իր բարեկամ մեծ Դեոթէին հարցնէ,
Որ արուեստի բոլոր գաղտնիքները ինձնից սովրած է,
Թէ նա եթէ նկատուում մի փիղ հսկայ, ահագին,
Ո՞րքան մեծ Մեծ-Բրիտանիայի մեծագոյն որդին։
Կամ, մեծ զոյգ՝ նահապետ Հոմերոսին, Վերգիլիոսին,
Եւ կամ հռչակաւոր Դանթէին ու Սոփոկլէսին,
Թէ ի՞նչպէս է քերթողական արուեստի այն դպիր,
Որին տիեզերք կոչում է Սթրաթֆորթցի Շէքսպիր։
Հպարտի սնապարծ խօսք չէ, որ սնափառ հոգիս,
Իմաստակ քերթողների պէս, ի զուր դուրս է տալիս.
Ազգեր, հասարակութիւններ միահամուռ վճռով
Հաստատել են և եղել երկրպագու, ջատագով,

զրքեր...է յօրինում։ Գողանում է, իմանալով նրա ծանօթներից, նրա մշակած՝ բայց դեռ չգրած սիւժէները, և պիէսներ գրում ու ծափահարւում։ Այս 6—7 տարուայ մաքառման մէջ նրանք ջարդ և փշուր են անում Հիւգոյի նիւթականը և սա՝ նրանց ուսումնականը։

Որովհետև հին ու նոր բոլոր խոշոր դպրոցներ
Ինձանում միանում, ցուցնում փոխադարձ զիջում սէր,
Ինչպէս զանազան ուղղութեամբ գետեր թափւում են ծով,
Եւ հեռանում, նորից զանազանւում գոյնով, համով։
Երեք հարիւր տարի է, ինչ իշխում է իմ հանճար,
Որից ազատուելու հանճարները չեն գտնում մի ճար.
Թէև մի քանի անգամ մեծ մտքերը ըմբոստորէն,
Ինչպէս Մոլիէռ, կատաղի Հիւգօն, Շիլլէր, Գեոթէն,
Ուրիշները, նոր-Աշխարհից մի-երկուսը, Նորվեգիացին,
Իմ դարաւոր բարձր շէնքը կործանած յայտարարեցին,
Բայց ամէնքն էլ հիասթափուեցին, համոզուելով որ
Դարեր հարկաւոր էր որ լինէր այդ հնարաւոր։
Մարդկութիւնը ինձնից վերջ արտադրեց երեք քանքար,
Որոնք պիտ՝ նկատուէին տաղանդների վիմաքար.
Մին՝ կէս դար առաջ Ամերիկայում՝ մի գեղջուկից,
Որ կը լինէր Միլտոնի վտանգաւոր մրցակից,
Բայց, աւա՜ղ, մի հրդեհում աւանդեց իր սուղ հոգին,
Դեռ չհասած գործօն կեանքի քառասնամեայ հասակին.
Երկրորդն՝ Հիւսիսում, նրանից յետոյ՝ բայց գերազանց,
Զգտնելով միջոց՝ թառամեցաւ քառասուն անց։
Սա՝ որի ուղեղը ծանրագոյն էր քան Հոմերոսին,
Լարած էր իր ոյժն ինձ գերազանցելու նպատակին։
Իսկ երրորդը հնդկաստանցի, զօրեղագոյն քան երկուսը,
Ծնուեց ճիշտ նախորդ դարի վերջին քառորդում Ցայնկոյս.
Քուրմ է այժմ նա, մտքով և մարմնով առողջ և ուժեղ,
Որի նմանը չկայ այժմ Երկրում ոչ մի հանճարեղ։
Բայց այն միջավայրում չի գնահատւում բնականը,
Այլ միայն՝ ուսման ամբարումն, այսինքն՝ ստացականը։
Եթէ նա ինձպէս ծնուած լինէր մի անգլիացուց,

Կը լինէր արժանաւոր մարտիկ աստիճանացոյց.
Կ'ուռնար ինձ դէմ որոտաձայն ահռելի այդ գաղան.
Կը քարշէր զայրացկոտ իշխանութեան իմ գաւազան.
Բայց եթէ մի րոպէ կ'ահաբեկէր անդորրութիւնս,
Սակայն էլի չէր կործանիլ մտաւոր պետութիւնս։
Երկնահանճար Շէքսպիրն եմ, չունիմ վախ ոչ ոքից,
Բացի ամեն ինչ անհետացնող ժամանակից։

ԳՈՑՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Մերթ ահարկու որոտընդոստ և մերթ լռիկ քաղաքավար
Կռւում ենք մենք անդադար առանձնապէս կամ հաւաքաբար.
Մեր զէնքերն են զէնք ու զրահ, գիտութիւն, դաւ ու դարան.
Իսկ կռուապատճառն է «սեփական» այդ ամարդ ածական։
Մարդ մարդի դէմ, ազգ ազգի դէմ մաքառում ենք գիշեր ցերեկ։
Որպէս զի գոյութիւն պահենք, փառք և հաճոյք մեզ ճարենք։
Մեզանից մին ջախջախւում է, խայտառակւում, քայքայւում
Միւսն նրա հաշուով փարթամանում, հզօր ներկայանում։
Այստեղ արդարութիւն, ամօթ հարկաւոր չէ իսկի երբէք,
Նոյն իսկ տղայական, ծիծաղելի համարել կարող էք։
Այստեղ խղճին չի ներգործում թշուառի աղեխարշ ձայն,
Ուրիշ խնդիրներում միայն դա համարւում է բնական։
Ի՞նչ փոյթ սակայն թէ դառն է զրկանքներից քաղած պտուղ,

Թէ կծու է մեզ նմանների մարմնից դուրս բերած իւղը։
Արդեօք ագահ ստամոքսն յագեցնելու չկայ միջոց,
Մեր սնափառ տենչանքներին չկայ արդեօք այլ հնոց.
Երկիրն արդեօք մեզ ամենքիս չէ՞ տալ սնունդ հաւասար,
Որ իբրև ընկեր և եղբայր ապրենք մենք միասնաբար։
Գիտութիւն և գեղարուեստ չեն հայթայթել մեզ ա-
ռատ նիւթ,
Որ թելադրէ հետաքրքրութիւն, մտքի մրցում անքոյթ։

ԱՇԽԱՐՀԻ ՎԱՃԵԼՔ ԵՒ ՑԱՒ

Հանճարի ընծայած բերկրանք
Ընդհանուրի համակրանք,
Պաշտօնի փառք, սիրոյ հաճոյք
Եւ մեծ ու փոքր հանդէս խնջոյք,
Ծնողաց ջերմ, քաղցր գգուանք
Եւ զաւակաց սէր, փայփայանք,
Ոսկեձեղուն շքեղ պալատ,
Սնդուսեայ զգեստ, զարդ ոսկեպատ,
Նուագ ու երգ, ձի և գնացք,
Բնութեան ծոցում զբօսանք,
Ոգելից կամ քաղցր ըմպելիք,
Եւ համադամ շատ ուտելիք,
Այս չեն, Բնութիւն, այն ամենք,
Որ տուած ես դու մեզ վայելք։
Հրդեհ, ժանտախտ, պատերազմ, սով,
Ցիւն և հեղեղ, երկրաշարժ, ծով,
Սպանութիւն և կողոպուտ,
Ծնողաց մահ, որդու կորուստ,

Հիւանդութիւն, վէրք և կսկիծ,
Պատուի արատ, սրտի թախիծ,
Շղթայ, աքսոր, բանտ, կախաղան,
Թափառական, անբնակարան
Կեանք, մշտական հոսող քրտինք,
Եւ ծերութեան դողդողջուն տիք,
Եւ այլ հազար ու մի աղէտ,
Որոնց ենթակայ ենք յաւէտ։
Եւ այս կրելիք անբաւ,
Չէ, տուած ես մեզ դու իբր ցաւ։
Չէ, չէ, չէ այս արդարութիւն,
Թունալից է կեանքի արիւն,
Կարճ է մեր կեանքը, գիտես արդէն,
Մեր ցաւի մի մասն գցիր դէն,
Առանց այն էլ շատ դժբաղդ ենք,
Երբ աչքի առաջ միշտ ունենք,
Մահ, ոչնչութիւն կամ դժոխք,
Կեանք դառնագին և անողոք։
Բայց ինչ է սա, որպէս պատգամ,
Ինչպէս լսում էր շատ անգամ.
Մի երկնային սուրբ ներշնչում,
Մի ձայն աղմկում սրտիս խորքում.
Որ ասում է, կարծես, այսպէս,
—«Սխալւում ես դու մեծապէս,
Ձեզ շնորհած եմ մի մոլորակ,
Իբր երջանկութեան ագարակ,
Ձեր ցաւերը դուք էք ստեղծած։
Եւ ոչ երկնից ուղարկած Աստուած։
Դուք ունիք մի միտք բանական,

Դարձրէք նրան մի բուրաստան,
Բաժնեցէք ձեր մէջ ձեր վշտերը,
Սանձեցէք դուք բնութեան աւեր,
Սիրեցէք անկեղծաբար միմեանց,
Աշխատեցէք իբրև մի անձ,
Իսկ դէպի դժնեայ գերեզման
Մի՛ լինիք յոռետես այնքան,
Մահից յետոյ յուսացէք որ
Կը գտնէք հանգիստ և անդորը,
Կը գտնէք մի բնակարան,
Մի ժպտուն կեանք յաւիտենական»։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Им. А. Мясникяна

Իմ միակ աշխատությունները

1. Փառանձեմ, կոմէդիա, (Տրագի-կոմէդիա) չորս արարուածով և վեց պատկերով, սպառած։
2. Բանաստեղծական Մոդէլներ, № 1 գինը 20 կ.

Տպագրության համար պատրաստ է՝

3. Փանոսի դատ, իրաւագիտական և գեղարուեստական աշխատութիւն, բոլորովին նոր բան, գինն է 70 կ.
4. Սոֆեա, դրամա հինգ արարուածով, գինն է 1 բուբլի։

Պատրաստում են հետեւեալ աշխատությունները

5. Բանաստեղծական Մոդէլներ, № 2
6. Տիկնոջ։։դրամա։
7. Հայ գրականության Արեւելեան ճիւղ, և այլն։

Դրամ է { 20 կոպ.
1/2 ֆր.
2 ղրշ.

154.
ԱԱԴ
arm
5532
1952
2013